№ 26 Փետրվարի 13 (25) 1881 Փետրվարի 13 (25) № 26

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարարտաքսցիր գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Հայոց բարեգործական ընկերութիւն: Թիֆլիսի դումա: Նիրքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Թոմաս Կարլէյլ:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական: Դաւիթ բէկ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Այդ վերնագրով „Кавк. Курьеръ“ լրագիրը տպել է հետեւեալ յօդուածը:

Վերջին երկու երեք տարիները բաւական նշանաւոր ժամանակամիջոց են կազմում հայերի ազգային շարժման վերաբերութեամբ: Այդ շարժման գլխաւոր երեւոյթներից մէկը պէտք է համարել հայոց բարեգործական ընկերութիւնները, որոնց կազմակերպութիւնը ստէպ ստէպ զբաղեցնում է հայերին եւ որոնք գրաւում են նրանց ուշադրութիւնը եւ բարեգործական ոյժերը հայ ազգի պէտքերի համար: Յայտնի է, որ Թիւրքիայի եւ Ռուսաստանի մէջ մի քանի այդպիսի ընկերութիւններ կան, որոնցից ամենանշանաւոր տեղերը ունեն Կ. Պոլսի «Միացեալ ընկերութիւնը» եւ Բագուի «Մարդասիրական ընկերութիւնը», թէպէտ սա առաջինի չափ նշանաւոր չէ: Այդ բոլոր ընկերութիւնները հայ ամբոխի մէջ լուսաւորութիւն տարածելու շնորհակալութեան արժանի եւ յարգելի նպատակն ունեն:

Այժմ Թիֆլիսի մէջ մի քանի երիտասարդների աշխատութեամբ կազմակերպվում է մի նոր ընկերութիւն գործունէութեան աւելի ընդարձակ նպատակներով, քան թէ վերոյիշեալ ընկերութիւնները: «Հայոց բարեգործական ընկերութեան» պրոգրամը պարունակում է ամեն տեսակ հոգսեր հայերի կրթողական եւ բարոյական առաջադիմութեան համար: Այդ ընկերութեան հիմնվելը համակրութեամբ ընդունվեցաւ լուսաւորված բոլոր հայերի կողմից եւ այդ համակրութիւնը նշանաւոր գրաւական կարող է լինել նոր ընկերութեան գործունէութեան համար: Այդ գործի սկզբնապատճառ դառնող պարոններից կազմված ընկերութեան կանոնադրութիւնը քննվում է Թիֆլիսի հայ ինտելիգենցիայից, որ արդէն մի քանի նիստ է ունեցել Արծրունու թատրոնում:

Իր ժամանակին մենք մանրամասն տեղեկութիւն կը տանք ընկերութեան բնաւորութեան եւ ապագայ գործունէութեան մասին, բայց այժմ մենք կամենում ենք շօշափել մի իրական հարց, որ ծագեցաւ ընկերութեան նիստերի ժամանակ:

Յունվարի 4-ին առաջին նիստ կայացաւ այդ ընկերութեան կանոնադրութիւնը քննելու համար: Հաւաքվել էին 90 մարդ: Կանոնադրութեան նախագիծը կարդալուց յետոյ «Մշակի» խմբագիր պ. Գրիգոր Արծրունի առաջարկեց լրացնել այդ նախագծի համապատասխան յօդուածը հետեւեալ խօսքերով. «Ընկերութեան նպատակն է նպաստել կրթութեան տարածելուն հայերի մէջ առանց կրօնի խտրութեան»: Ժողովը առանց ընդդիմադրութեան ընդունեց այդ առաջարկութիւնը եւ կանոնադրութեան յիշեալ յօդուածը նոր ձեւով խմբագրվեցաւ: Յունվարի 25-ի նիստը չափազանց մեծ անկանոնութիւն գործեց. նա մերժեց առաջին նիստից ընդունված պ. Գրիգոր Արծրունու առաջարկութիւնը եւ անսխալական յայտնեց յունվարի 25-ի նիստը, այսինքն որ այդ նիստի վճիռները չեն կարող փոփոխված լինել միւս նիստերի ժամանակ, ինչպէս այդ արվեցաւ առաջին նիստի վճռի հետ: Ինչպէս տեսնում է ընթերցողը, այդ անկանոնութիւնը խանդարում է խորհրդակցական եղանակների երկու գլխաւոր սովորութիւնները. 1) առաջին նիստի ժամանակ ընդունված առաջարկութիւնը մերժվում է երկրորդ նիստից, և 2) երկրորդ նիստի վճիռները պայմանաւորված են անսխալականութեամբ և պարտադիր են միւս նիստերի համար: Ակներև է, որ շատ վատ է այդպիսի թերի սովորութիւն մտցնել մի նոր կազմակերպվող ընկերութեան նիստերի մէջ, որ ամենից առաջ արդարութեան և հաստատ գործողութիւնների պէտք ունի:

Հասկանալի է, որ առաջին նիստը ոչինչ յանդիմանութեան արժանի չէր լինի, եթէ նա չընդունէր պ. Գրիգոր Արծրունու առաջարկութիւնը, որովհետև հայ-լուսաւորչականների ազատ կամքից է կախված բարիք գործել իրանց արիւնակից այլազգաւան հայերին թէ ոչ: Բայց երբ այդ առաջարկութիւնը մի անգամ ընդունվեցաւ, մեր կարծիքով, ոչ իրաւաբանական և ոչ բարոյական իրաւունք կայ մերժել այդ առաջարկութիւնը հետևեալ նիստի ժամանակ: Մեր կարծիքով պ. Արծրունու առաջարկութիւնը կարելի էր պայմանաւորել մօտաւորապէս հետևեալ կերպով. որովհետև կազմակերպվող ընկերութեան նպատակը բարեգործական է, ուրեմն չափազանց անիրաւացի կը լինէր բռնաբարել այն անձանց կամքը, որոնք կամենում են օգնել ընկերութեան գործունէութեանը: Եթէ հայ-լուսաւորչականները զոհաբերութիւն են անում բացառապէս հայ-լուսաւորչականների համար, ուրեմն ընկերութիւնը իրաւունք չունի այդ միջոցները այլազգաւան հայերի համար գործածել: Ուրիշ բան է, եթէ այլազգաւան հայերը իրանց կամքով կօգնեն ընկերութեան գործունէութեանը. այդ դէպքում նրանց տուրքերը կարելի կը լինէր գործ դնել իրանց կրօնակիցների օգտին: Այդպիսով բաւականացած կը լինէին բոլոր հայերը կրօնական բաժանմունքների վերաբերութեամբ, իսկ ազգային գործի վերաբերութեամբ նրանք բոլորն էլ միատեսակ իրաւունքներ կունենային ընկերութեան գործունէութեան շրջանի մէջ: Սի և նոյն ժամանակ այդ փորձը կը հաստատէր, թէ մինչև ո՞ր աստիճան անկեղծ են հայ-կաթոլիկները, հայ-բողոքականները և այլն, դէպի հայ ժողովուրդի ազգային շարժումը և այդ դէպքում „Մշակի“ և „Մեղուի“ մէջ անվերջանալի և ջերմ պոլեմիկայի առարկայ դարձած տեսական հարցը կը վճռվէր գործնականապէս:

## ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱ

—

Փետրվարի 9-ին կայացաւ Թիֆլիսի դումայի նիստը, որի քննութեան համար նշանաւելի ընդարձակ նպատակներով, քան թէ վերոյիշեալ ընկերութիւնները: «Հայոց բարեգործական ընկերութեան» պրոգրամը պարունակում է ամեն տեսակ հոգսեր հայերի կրթողական և բարոյական առաջադիմութեան համար: Այդ ընկերութեան հիմնվելը համակրութեամբ ընդունվեցաւ լուսաւորված բոլոր հայերի կողմից և այդ համակրութիւնը նշանաւոր գրաւական կարող է լինել նոր ընկերութեան գործունէութեան համար: Այդ գործի սկզբնապատճառ դառնող պարոններից կազմված ընկերութեան կանոնադրութիւնը քննվում է Թիֆլիսի հայ ինտելիգենցիայից, որ արդէն մի քանի նիստ է ունեցել Արծրունու թատրոնում:

Իր ժամանակին մենք մանրամասն տեղեկութիւն կը տանք ընկերութեան բնաւորութեան և ապագայ գործունէութեան մասին, բայց այժմ մենք կամենում ենք շօշափել մի իրական հարց, որ ծագեցաւ ընկերութեան նիստերի ժամանակ:

Յունվարի 4-ին առաջին նիստ կայացաւ այդ ընկերութեան կանոնադրութիւնը քննելու համար: Հաւաքվել էին 90 մարդ: Կանոնադրութեան նախագիծը կարդալուց յետոյ «Մշակի» խմբագիր պ. Գրիգոր Արծրունի առաջարկեց լրացնել այդ նախագծի համապատասխան յօդուածը հետեւեալ խօսքերով. «Ընկերութեան նպատակն է նպաստել կրթութեան տարածելուն հայերի մէջ առանց կրօնի խտրութեան»: Ժողովը առանց ընդդիմադրութեան ընդունեց այդ առաջարկութիւնը և կանոնադրութեան յիշեալ յօդուածը նոր ձեւով խմբագրվեցաւ: Յունվարի 25-ի նիստը չափազանց մեծ անկանոնութիւն գործեց. նա մերժեց առաջին նիստից ընդունված պ. Գրիգոր Արծրունու առաջարկութիւնը և անսխալական յայտնեց յունվարի 25-ի նիստը, այսինքն որ այդ նիստի վճիռները չեն կարող փոփոխված լինել միւս նիստերի ժամանակ, ինչպէս այդ արվեցաւ առաջին նիստի վճռի հետ: Ինչպէս տեսնում է ընթերցողը, այդ անկանոնութիւնը խանդարում է խորհրդակցական եղանակների երկու գլխաւոր սովորութիւնները. 1) առաջին նիստի ժամանակ ընդունված առաջարկութիւնը մերժվում է երկրորդ նիստից, և 2) երկրորդ նիստի վճիռները պայմանաւորված են անսխալականութեամբ և պարտադիր են միւս նիստերի համար: Ակներև է, որ շատ վատ է այդպիսի թերի սովորութիւն մտցնել մի նոր կազմակերպվող ընկերութեան նիստերի մէջ, որ ամենից առաջ արդարութեան և հաստատ գործողութիւնների պէտք ունի:

Հասկանալի է, որ առաջին նիստը ոչինչ յանդիմանութեան արժանի չէր լինի, եթէ նա չընդունէր պ. Գրիգոր Արծրունու առաջարկութիւնը, որովհետև հայ-լուսաւորչականների ազատ կամքից է կախված բարիք գործել իրանց արիւնակից այլազգաւան հայերին թէ ոչ: Բայց երբ այդ առաջարկութիւնը մի անգամ ընդունվեցաւ, մեր կարծիքով, ոչ իրաւաբանական և ոչ բարոյական իրաւունք կայ մերժել այդ առաջարկութիւնը հետևեալ նիստի ժամանակ: Մեր կարծիքով պ. Արծրունու առաջարկութիւնը կարելի էր պայմանաւորել մօտաւորապէս հետևեալ կերպով. որովհետև կազմակերպվող ընկերութեան նպատակը բարեգործական է, ուրեմն չափազանց անիրաւացի կը լինէր բռնաբարել այն անձանց կամքը, որոնք կամենում են օգնել ընկերութեան գործունէութեանը: Եթէ հայ-լուսաւորչականները զոհաբերութիւն են անում բացառապէս հայ-լուսաւորչականների համար, ուրեմն ընկերութիւնը իրաւունք չունի այդ միջոցները այլազգաւան հայերի համար գործածել: Ուրիշ բան է, եթէ այլազգաւան հայերը իրանց կամքով կօգնեն ընկերութեան գործունէութեանը. այդ դէպքում նրանց տուրքերը կարելի կը լինէր գործ դնել իրանց կրօնակիցների օգտին: Այդպիսով բաւականացած կը լինէին բոլոր հայերը կրօնական բաժանմունքների վերաբերութեամբ, իսկ ազգային գործի վերաբերութեամբ նրանք բոլորն էլ միատեսակ իրաւունքներ կունենային ընկերութեան գործունէութեան շրջանի մէջ: Սի և նոյն ժամանակ այդ փորձը կը հաստատէր, թէ մինչև ո՞ր աստիճան անկեղծ են հայ-կաթոլիկները, հայ-բողոքականները և այլն, դէպի հայ ժողովուրդի ազգային շարժումը և այդ դէպքում „Մշակի“ և „Մեղուի“ մէջ անվերջանալի և ջերմ պոլեմիկայի առարկայ դարձած տեսական հարցը կը վճռվէր գործնականապէս:

## ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱ

—

Փետրվարի 9-ին կայացաւ Թիֆլիսի դումայի նիստը, որի քննութեան համար նշա-

---

# ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Բ.

Այնուհետև Դաւիթ բէգը հրամայեց կանչել իր մօտ նամակաբերին:

—Ի՞նչպէս է քո անունը, հարցրեց, երբ յայտնվեցաւ նա:

—Աղասի, ձեր ծառան, պատասխանեց նամակաբերը, մի առանձին անձնավստահութեամբ կանգնելով բէկի առջև:—Իմ հայրը մէլիք Վարթանէսի մօտ տնտես էր, իմ մայրը այնտեղ լուացարար էր. ես նրանց ընտանիքի մէջ եմ ծնվել և նրանց հացով եմ մեծացել: Նրանց տան կործանման ժամանակ իմ հայրը սպանվեցաւ. անիրաւ պարսիկները նրան խէնջարներով ծակծկեցին, ստիպում էին, որ ցոյց տայ մէլիքի բոլոր հարստութիւնը: Բայց հայրս լուռ մնաց և աւելի լաւ համարեց մեռնել, քան իր տիրոջ կայքերի մատնիչը լինել: Նրանից յետոյ մայրս շատ չապրեց, կսկիծը նրան շուտով գերեզման տարաւ, երբ ես Ստեփաննոսի հետ գերի ընկայ Ֆաթալի խանի ձեռքում: Երբ Թորոս իշխանը մեզ ազատեց, այնուհետև ես չը բաժանվեցայ Ստեփաննոսից: Որպէս իմ հայրը ծառայել էր նրա հօրը, ես էլ սկսեցի ծառայել որդուն:

—Այդ բոլորը լաւ, նրա խօսքը ընդհատեց բէկը.—դու այն ասա, հիմայ ինչ է շինում քո տէրը:

—Ի՞նչ կարող է շինել թեքերը կտրված արծիւը. նրա հօր երկրներին այժմ տիրում է ուրացող մէլիք Ֆրանգիւլը: Ինքը իշխանը գլուխ դնելու տեղ չունի. մնում է նրան Քօրողլուի նման թափառել մի տեղից միւս տեղ, պատժել, վրէժխնդիր լինել ուր որ անիրաւութիւն, անարդարութիւն կը տեսնվի:

—Մարդիկ ունի՞ իր ձեռքի տակ:

—Մի փոքրիկ խումբ միայն, բայց այդ խումբը արժէ հազար մարդու. բոլորը մեր երկրի քաջերից ընտրեալներն են, բոլորը մի հոգու պէս կապված են իրանց սիրելի պետի հետ:

—Դու էլ իշխանի խմբիցն ես:

—Այո:

Դաւիթ բէկին մեծ բաւականութիւն էր պատճառում խօսակցութիւնը իր հայրենակցի հետ. այդ մասամբ լցուցանում էր տարիներով տարագիր երիտասարդի սրտի կարօտութիւնը: Նա հրամայեց Աղասուն նստել իր մօտ: Աղասին տեղաւորվեցաւ խարոյկի մօտ, օթոցի վրա: Նրան շատ զարմացնում էր բէկի անշուք կացութիւնը: Նա սպասում էր գտնել վրաց թագաւորի հռչակաւոր զօրապետին փառաւոր պալատի մէջ, շրջապատած աշխարհի բոլոր շքեղութիւններով: Իսկ այժմ ինչ էր տեսնում,—մի գետնափոր խրճիթ, որի նմանը Սիւնեաց երկրի ամեն մի գիւղացին ունէր: Ո՞րքան աղքատութիւն է տիրում այդ երկրում, մտածում էր Աղասին. երբ երկրի նշանաւոր պետական մարդը այդպէս է ապրում, ապա ինչ կը լինի խեղճ ժողովրդի դրութիւնը:

Աղասու մտածութիւնները ընդհատեց բէկը, հարցնելով, թէ մէլիք Ֆրանգիւլը և Դաւիթ ուրացողը ինչ տեսակ յարաբերութիւնների մէջ են:

—Որպէս երկու շներ, պատասխանեց Աղասին,—միմեանց խեղդում են, և ամեն մէկը աշխատում է միւսի ձեռքից ոսկորը խլել:

—Խանը իր օգտին է նայում, որը աւելի շատ կաշառք է տալիս, նրա խօսքն է լսում:

Դաւիթ բէկի տան մէջ բնակվում էր մի վրացի ընտանիք նրա սեպհական գիւղի ճորտերից: Այդ գիւղը բէկը ընծայ էր ստացել վրաց թագաւորից, այն փառաւոր յաղթութիւնից յետոյ, որ նա կատարեց լեզգիների դէմ: Բէկի ամբողջ տնտեսութիւնը այդ ընտանիքի ձեռքումն էր. հարսները և աղջիկները ծառայում էին որպէս աղախիններ, իսկ տղամարդիկը որպէս սպասաւորներ: Նրանք ընտանեբար, առանց քաշվելու, անդադար ներս էին մտնում և դուրս գալիս, իրանք էլ չը հասկանալով, թէ ինչ բանով են զբաղված: Բէկը հրամայեց ընթրիք պատրաստեն:

Մի քանի կնիկներ մօտեցան խարոյկին, յատակի կենտրոնում թաւալված գերանների ծայրերը մօտեցրին միմեանց, կրակը բոցավառվեցաւ, տարածելով իր շուրջը խիստ ախորժ լուսաւորութիւն: Խարոյկի վրա, առաստաղից քարշ էին ընկած մի քանի շղթաներ, ջահեր կախ տալու շղթաների նման: Նրանց ծայրերը վերջանում էին կեռ կարթերով և հանում էին մինչև խարոյկը: Նրանցից կրակի վրա քարշ էին տալիս մեծ և փոքրիկ կաթսաներ, երբ պէտք էր միրան եփել: Կնիկները քարշ տուին կաթսաները և սկսեցին ընթրիքի պատրաստութիւն տեսնել:

—Այսօր բերած փասիանները մի քանիսը խորովեցէք, ասաց բէկը, դառնալով դէպի կնիկները:

—Տէր ես, պատասխանեցին կնիկները խորին հաճութեամբ, և նստելով կրակի շուրջը, մերկ գետնի վրա, սկսեցին մի և նոյն սենեակում փետրահան անել փասիանները, որոնք բէկի այն օրվայ որսորդութեան արդիւնքն էին:

Բէկը դարձեալ շարունակեց իր խօսակցութիւնը նամակաբերի հետ. Սիւնեաց աշխարհի վրա: Բայց երկու մանկահասակ կնիկների մէջ անց էր կենում մի այլ, աւելի հետաքրքիր խօսակցութիւն.

—Ի՞նչ սիրուն փետուրներ են, ասաց նրանցից մէկը, Թինան, մի առանձին հրճուանքով.—եթէ այդ փետուրներն էլ հաւաքելու լինեմ լինձ համար, իմ փետուրէ բարձը լցված կը լինի, կը դնեմ գլխս ու այսպէս անուշ քնով կը քնեմ:

Վերջին խօսքերի արտասանելու միջոցին երիտասարդ կինը ձեռքը դրեց ականջին, գեղեցիկ աչքերը խփեց և գլուխը մի կողմ թեքեց, ցոյց տալու համար, թէ ինչպէս անուշ քնով պիտի քնէ:

Թինայի այդ երեւակայական բաւականութիւնը գրգռեց նրա աշխատակցի՝ Դարօի նախանձը և հետեւապէս նրա բարկութիւնը, և նա սաստիկ խթելով Թինայի կողքը, ասաց.

—Ի՞նչու միայն քեզ համար, խոզի զաւակ, ապա ես բարձ չեմ ուզի: Ինչ որ լինի՝—ինձ համար: Ես էլ կուզեմ...

—Դու Աստուծոյ կրակը ու սատանայի ցաւը կուզես, պատասխանեց Թինան, չը մոռանալով նոյն կերպով խթել Դարօի կողքը:—Քո այդ մէյմունի գլխին խոտի բարձը աւելի սաղ կը դայ:

Թինայի համեմատութիւնը չափազանց էր. Դարօի գլուխը ամենևին մէյմունի նմանութիւն չունէր, ընդհակառակն, նա աւելի թարմ և ախորժելի դէմք ունէր: Այդ վիրաւորանքը մի կողմից, և գուցէ կողքի ցաւը միւս կողմից, գրգռեցին Դարօին երկու ձեռքով պինդ բռնել Թինայի ծամերից և այնպիսի սաստիկ ուժով ձիգ տալ, որ փոքր էր մնում կրակի մէջ պիտի գլորէր նրան:

—Վայ...վայ...գոչեց Թինան և ինքն էլ փոխադարձաբար բռնեց Դարօի ծամերից:

Սկսեցին միմեանց քաշքշել: Աղմուկը նրանց

նակված էին 10 գործ։ Ներկայ էին մօտ 26 ձայնաւորներ, Նախագահում էր քաղաքագլուխ Մատինով։ Անցեալ նիստի զեկուցումը կարդալուց յետոյ, ձայնաւոր Զուբալով յայտնեց, որ նա մի գրութիւն ունի ներկայացնելու հաշուապահական կանոնադրութիւնը գործածելու մասին։ Այդ գրութիւնը ստանալուց յետոյ քաղաքագլուխը յայտնեց, որ պէտք է սկսել հերթական հարցերի քննութիւնը։ Ձայնաւոր Ալադատով ասեց, որ հարկաւոր է կարդալ պ. Զուբալովի գրութիւնը, իսկ քաղաքագլուխը մեկնելով, որ ամեն մի ձայնաւորի գրութեան ընթերցանութիւնը կարելի է կամ իսկոյն սկսել և կամ թողնել միւս անգամի, անցաւ հերթական գործերի քննութեանը։

Առաջին գործ նշանակված էր 1881 թ. ել և մնից հաշիւը, որ դեռ ևս վերջացած չէր։ Պէտք է քննվեր քաղաքային բժիշկների համար հարկաւոր ծախսի յօդուածը։ Ինչպէս հաղորդեցինք „Մշակի“ անցեալ համարներից մէկի մէջ, յունվարի 29-ի նիստի ժամանակ հարց բարձրացաւ արդեօք լաւ չի լինի քաղաքային առողջապահական մի բժիշկ ունենալ, որովհետև քաղաքային միւս բժիշկները բուն պոլիցիական պարտականութիւններ ունեն և անկարող են հսկել առողջապահական մասի վրա։ Վիճաբանութիւնների ժամանակ յայտնվեցաւ, որ մի լաւ բժիշկ ունենալու համար հարկաւոր է գոնէ 5000 ր. վճարել, որպէս զի նա կարողանայ թողնել իր պրակտիկան և այդ գործով զբաղվել, որ եթէ բժիշկը փոքր վարձատրութիւն ստանայ, գործերը նոյն դրութեան մէջ կը լինեն, ինչ որ այժմ, միայն թէ նա ի զուր ռոճիկ կը ստանայ և ոչինչ չի կատարի։ Բացի այդ յայտնվեցաւ, որ վարչութիւնը խնդրել է սենատից ազատել նրան բժշկներին տրվելի 7260 ր. ծախսից և եթէ սենատը կը կատարէ քաղաքի խնդիրքը այն ժամանակ կարելի կը լինի մի ապահոված բժիշկ ունենալ։ Վճռվեցաւ չը վարձել առանձին բժիշկ և հարցը բաց թողնել մինչև որ սենատը վճռի այդ գործը։

Այնուհետև խօսվեցաւ, որ անասնաբոյժ բժիշկին հարկաւոր է տարեկան 200 ր. աւելացնել, որովհետև սպանդանոցը նաւթլուղ է տեղափոխված և որ նա կարողանայ կառքի ծախսը վճարել։ Ձայնաւոր Ալադատով նկատում է, որ անասնաբոյժ բժշկի սպանդանոց գնալը աւելորդ է, որովհետև նա չէ կարող հասնել, երբ հարկաւոր է, որ մինչև նրա գալը միսը տարած կը լինի, որ նրա բացակայութեամբ կարող են մորթել այն կենդանիներին, որոնք վատ են յայտնված։ Քաղաքագլուխը նկատեց, որ մի ժամանակ փոքր եղաւ անասուններին մորթելու ժամանակը նշանակելու, որ նա անաջող հետևանքներ ունեցաւ։ Ձայնաւոր Էլիմիրզով նկատում է, որ կարելի է 200 ր. աւելացնել, միայն թէ անասնաբուժը նաւթլուղ ապրի։ Դուման վճռեց նշանակել 200 ր., առանց պարտաւորեցնելու բժիշկին նաւթլուղ ապրել և ի նկատի ունենալով, որ սպանդանոցը տեղափոխելու հարցը շուտով կը վճռվի, ուրեմն բժիշկը աննշան գումար կը ստանայ։ Այնուհետև ընդունվում են ելքի միւս յօդուածները, որոնցից մէկի մէջ նշանակված է 12 ր. ծախս վերայի խաչի պահապանի անակի համար։ Ալադատով նկատում է, որ լաւ չէ այդպիսի ծախս նշանակել, քանի որ վարչութիւնը իր ձեռքին ունի աննախատեսելի և արտաքոյ կարգի ծախսերի համար 5000 ր.։ Այնուհետև քննվեցաւ փողոցներ մաքրելու և նրանց վերանորոգելու յօդուածը։ Անցեալ տարի հրատարակված էր մի ցուցակ, որ որոշում էր թէ որ փողոցները ինչ ժամանակամիջոցից յետոյ պէտք է մաքրվեն։ Յայտնվեցաւ, որ ցուցակի որոշած կարգերը չեն կատարվում, որովհետև դա անկարելի է։ Ձայնաւոր Եւանդուլով առաջարկեց հրատարակել գոնեա այն ցուցակը, որ այժմ կատարում է վարչութիւնը։ Բացի այդ վճռվեցաւ առանձին յօդուածների մէջ մտցնել եկող տարվանից այդ յօդուածի մի քանի կէտերը։ Միւս յօդուածները աննշան փոփոխութեամբ ընդունվեցան։ Ալադատով յանդիմանում է վարչութեանը, որ նրան թոյլ չէ տալիս խօսել, որ վարչութեան անդամները պէտք է խօսեն այն ժամանակ, երբ նրանց հարցնում են։ Վարչութեան անդամ Թամամշեվ պատասխանում է, որ այդպիսի կանոն չը կայ և որ Ալադատով աչքերին թող է փչում մի այն։

Հարկաւոր ենք համարում նկատել, որ փողոցները վերանորոգելու և մաքրելու համար նշանակված է 90,600 ր. և որ ձայնաւոր Էլիմիրզովի յանդիմանութիւնը փողոցների անանցելի լինելու մասին բոլորովին անարդար էր, որովհետև թէ նա և թէ միւս ձայնաւորները կարող էին նկատել, որ փետրվարի 9-ին, երբ պէտք է քննվեր և այդ ծախսը, սկսել էին վերանորոգել Բարիատինսկայա փողոցի խճուղին և յատակագիծը «փոխադարձ կրեդիտի» տան առաջ, որի մօտով անցնում են շատ ձայնաւորներ, որոնք կարող են հաւատալ վարչութեան հոգատարութեան մասին փողոցները մաքրելու և վերանորոգելու առիթով։

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք։ «Երբէք մենք յիշեցինք «Agence Russe» լրագրի լուրը, իբր թէ մեր գաւառական մամուլը ազատված չի լինի ցենզուրայից։ Այսօր «С.-Петер. Вѣдом.» լրագիրը նոյնպէս կարճ կերպով յայտնում է որ «Agence Russe» լրագրից հաղորդված լուրը բոլորովին սուտ է։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Այստեղի պաշտօնեաների շրջանի մէջ խօսվում է քաղաքային կլուբ բանալու անհրաժեշտութեան մասին։ Կլուբի այն հայ անդամացուները, որոնք մտադիր են ձեռնարկել այդ գործին, եթէ դրանով չեն հիմնում թղթախաղի մի ապահով ապաստարան և այդ հիմնարկութեանը կրթողական նշանակութիւն են կամենում տալ, աւելի մարդասէր կը լինէին, եթէ դրա փոխարէն առ այժմ ուշադրութիւն դարձնէին ազգային ուսումնարանների անմխիթար վիճակի վրա։»

—

Մեզ գրում են Նուխուց որ այդտեղ երկու, երեք անվայ ընթացքում մի անսովոր երևոյթ տեղի է ունենում, այն է տէրութեանը ծառայող մասը պաշտօնեաների մէջ տեղափոխութիւնների և հրաժարականների յաճախ կրկնվելը։ Մի քանի պաշտօնական գործերի վերաբերութեամբ քննութիւններ են նշանակված և շարունակվում են։ Այդ քննութիւնների վերջանալուց յետոյ թղթակիցը խոստանում է հաղորդել մեզ նրանց մասին մանրամասները։

—

Մեզ գրում են ՂՈՒԲԱՅԻՑ, որ այդտեղ թէև ամէն ինչ առատ է, բայց այնու ամենայնիւ առաջին պիտոյքի մթերքները թանգ են ծախվում։ Ոչխարի մսի ֆունտը արժէ 12 կ., տաւարի մսի ֆունտը 10 կ., փայտ կամ ածուխ անցեալ նոյեմբեր ամսին թանգ էր, այժմ փոքր ինչ արժանացել է, պանիրը արժէ 17 կ., իւղը պուդը 12 կամ 14 րուբլի, ցորենի պուդը 1 ր. 5 կ., գարին 55 կ.։ Առուտուրը վատ է։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետևեալը։ «Մեր բէալական դպրոցի 6-որդ և 7-որդ դասատների հայ աշակերտների մէջ մի հաստատ խորհուրդ կայացաւ, որով նրանք վճռեցին այսուհետև միմիայն մայրենի լեզու գործածել միմեանց մէջ խօսելու ժամանակ։ Նոյնպէս վճռեցին հետևել հայոց նոր գրականութեանը և կարդալ հայերէն գրքերն ու պարբերական հրատարակութիւնները։» Այդ նպատակը շատ գովելի է, միայն մենք խորհուրդ կը տանք որքան կարելի է շատ կարդալ և օտար լեզուներով հրատարակվող գրքերը, քանի որ մեր նոր գրականութիւնը դեռ ևս ազքատ է և միայն այն մարդը, որ ընդհանուր մարդկային մտքերի հետ ընթերցանութեան միջոցով ծանօթանում է, կարող է մտաւորապէս զարգանալ այն աստիճան, որ օգուտ տայ և իր ազգին։ Կարդանք միշտ օտար գրվածները, բայց նոյն իսկ կարդալու ժամանակ միշտ աչքի առջև ունենանք մեր ազգի շահերը։ Ուզեղ այդ համեմատական անընդհատ աշխատանքը շատ է նպաստում իւրաքանչիւր անհատի մտաւոր զարգացմանը և մեծ օգուտ կը տայ ժամանակով և մեր ազգի ընդհանրութեանը։ Իսկ մեր մէջ խօսենք միշտ և միշտ հայերէն։ Այնպէս անենք որ ուրիշների մտքի արդիւնքից օգուտ քաղենք մեզ համար։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքի փողոցները և կամուրջը ծածկված են անանցելի ցեխով և ոչ ոք չէ մտածում մաքրել թէ փողոցները և թէ կամուրջը։ Կամուրջն էլ շատ վատ դրութեան մէջ է. նրա տախտակեայ հատակը ամեն տեղ ծակված է արդէն։

—

Չուլաբարում փողոցները այնքան խոր ցեխով են ծածկված և այն աստիճան վատ են լուսաւորվում, որ գիշեր ժամանակ անհնարին է շրջել փողոցներում առանց լապտերը ձեռքն ունենալու։ Մի հուլաբարցի պարոն խորհուրդ է տալիս իր թաղի ընակիչներին, որպէս զի քաղաքային ձայնաւորների, ուպրաւայի և քաղաքագլխի ուշադրութիւնը իրանց թաղի անմխիթար դրութեան վրա դարձնեն, մի գեղեցիկ օր ճաշկերոյթ սարքեն և հրաւիրեն ճաշին թէ քաղաքագլխին, թէ ուպրավայի անդամներին և թէ ձայնաւորներից ամենաճարտարախօսներին և յետոյ այդ մասը պաշտօնեաների մէջ տեղափոխութիւնների և հրաժարականների յաճախ կրկնվելը։ Մի քանի պաշտօնական գործերի վերաբերութեամբ քննութիւններ են նշանակված և շարունակվում են։ Այդ քննութիւնների վերջանալուց յետոյ թղթակիցը խոստանում է հաղորդել մեզ նրանց մասին մանրամասները։

—

Մեզ գրում են ՂՈՒԲԱՅԻՑ, որ այդտեղ թէև ամէն ինչ առատ է, բայց այնու ամենայնիւ առաջին պիտոյքի մթերքները թանգ են ծախվում։ Ոչխարի մսի ֆունտը արժէ 12 կ., տաւարի մսի ֆունտը 10 կ., փայտ կամ ածուխ անցեալ նոյեմբեր ամսին թանգ էր, այժմ փոքր ինչ արժանացել է, պանիրը արժէ 17 կ., իւղը պուդը 12 կամ 14 րուբլի, ցորենի պուդը 1 ր. 5 կ., գարին 55 կ.։ Առուտուրը վատ է։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետևեալը։ «Մեր բէալական դպրոցի 6-որդ և 7-որդ դասատների հայ աշակերտների մէջ մի հաստատ խորհուրդ կայացաւ, որով նրանք վճռեցին այսուհետև միմիայն մայրենի լեզու գործածել միմեանց մէջ խօսելու ժամանակ։ Նոյնպէս վճռեցին հետևել հայոց նոր գրականութեանը և կարդալ հայերէն գրքերն ու պարբերական հրատարակութիւնները։» Այդ նպատակը շատ գովելի է, միայն մենք խորհուրդ կը տանք որքան կարելի է շատ կարդալ և օտար լեզուներով հրատարակվող գրքերը, քանի որ մեր նոր գրականութիւնը դեռ ևս ազքատ է և միայն այն մարդը, որ ընդհանուր մարդկային մտքերի հետ ընթերցանութեան միջոցով ծանօթանում է, կարող է մտաւորապէս զարգանալ այն աստիճան, որ օգուտ տայ և իր ազգին։ Կարդանք միշտ օտար գրվածները, բայց նոյն իսկ կարդալու ժամանակ միշտ աչքի առջև ունենանք մեր ազգի շահերը։ Ուզեղ այդ համեմատական անընդհատ աշխատանքը շատ է նպաստում իւրաքանչիւր անհատի մտաւոր զարգացմանը և մեծ օգուտ կը տայ ժամանակով և մեր ազգի ընդհանրութեանը։ Իսկ մեր մէջ խօսենք միշտ և միշտ հայերէն։ Այնպէս անենք որ ուրիշների մտքի արդիւնքից օգուտ քաղենք մեզ համար։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքի փողոցները և կամուրջը ծածկված են անանցելի ցեխով և ոչ ոք չէ մտածում մաքրել թէ փողոցները և թէ կամուրջը։ Կամուրջն էլ շատ վատ դրութեան մէջ է. նրա տախտակեայ հատակը ամեն տեղ ծակված է արդէն։

—

Չուլաբարում փողոցները այնքան խոր ցեխով են ծածկված և այն աստիճան վատ են լուսաւորվում, որ գիշեր ժամանակ անհնարին է շրջել փողոցներում առանց լապտերը ձեռքն ունենալու։ Մի հուլաբարցի պարոն խորհուրդ է տալիս իր թաղի ընակիչներին, որպէս զի քաղաքային ձայնաւորների, ուպրաւայի և քաղաքագլխի ուշադրութիւնը իրանց թաղի անմխիթար դրութեան վրա դարձնեն, մի գեղեցիկ օր ճաշկերոյթ սարքեն և հրաւիրեն ճաշին թէ քաղաքագլխին, թէ ուպրավայի անդամներին և թէ ձայնաւորներից ամենաճարտարախօսներին և յետոյ այդ

---

վրա դարձրեց բէկի ուշադրութիւնը։ Բայց, երևի, այդ տեսակ գործողութիւնները այնքան յաճախ կրկնվում էին բէկի տան մէջ, որ նա մի առանձին նշանակութիւն չը տուեց, միայն զգուշացրեց, որ իրան չը խանգարեն։

—Թինա, Դարո, այդ ինչ խաբար է, այստեղ կուելու տեղ չէ, եթէ ուզում էք միմեանց խեղդել, գնացէք դուրսը։

Մինչ երկու կնիկները պատշաճը և քաղաքավարութիւնը պահպանելու համար պատրաստվում էին իրանց կռիւը տեղափոխել սենեակից դուրս, վրա հասան նրանց ամուսինները։ Նրանցից իւրաքանչիւրը վառելու փայտերից մի կոր վեր առնելով, սկսեց իր կնոջը ծեծել։ Խռովութիւնը աւելի աղմկալի կերպարանք ստացաւ։

—Անզգամներ, ասում էին նրանց,—կուելու ժամանակ էք գտել, չէք տեսնում մեր տէրը այս գիշեր հիւր ունի։

Կարծես, հիւրի մօտ միայն պէտք էր համեստ լինել։ Երկու կնիկները ընդունեցին այդ խրատը և իրանց մտքում յետաձգեցին կռիւը մի ուրիշ ժամանակի։ Խաղաղութիւնը կրկին տիրած կը լինէր, եթէ այդ միջոցին ներս չը վազէր երկու հարսների կատաղած սկեսուրը, կարգ և կանոն սիրող Քեթևանը։ Նա խլեց մի փայտի կոր և սկսեց իր որդիների պակաս թողածը ինքը լրացնել։ Հարսները սաստիկ ճիչ բարձրացրին։

—Հա՛ այդպէս... հա՛ այդպէս... կրկնում էր բարկացած պառաւը ու խփում։

—Բաւական է, Քեթևան, հանգստացէք, ասում էր բէկը փոքր ինչ վրդովված ձայնով և հրամայում էր դադարել։

—Դրանց պէտք է ծեծել, տէր իմ, պատասխանում էր բարեսիրտ Քեթևանը, չարունակելով իր գործը։—Քանի օր է, որ ծեծ չեն կերել, դրա համար կատաղել են։ Դրանց պէտք է ծեծել, միշտ ծեծել։

—Բաւական է, դարձեալ կրկնեց բէկը։

Բարկացած պառաւը այժմ դարձաւ դէպի իր տէրը։

—Այդ բոլորը ձեր մեղն է, տէր իմ, ասաց նա գլուխը շարժելով,—այդ բոլորը ձեր թուլութիւնից է։ Եթէ դուք էլ միւս աղաների նման ծեծէիք, այսպէս չէին լինի։ Այդ բոլորը ձեր մեղն է։ Մենակ դրանք չեն, որ կապը կտրած են, ամենքը այստեղ փչացել են, նրա համար որ, դուք չէք ծեծում։ Այսպիսի աղայ ես չեմ տեսել։ Մտիկ տուէք մեր հարևան Գիւորգիին, ինչպէս իր ճորտերի հոգին հանում է. դրա համար նրանից վախենում են։

Բէկը ժպտաց միայն և ոչինչ չը պատասխանեց։ Ճորտութիւնը այդ ողորմելի ժողովրդին անասնական դրութեան էր հասցրել, որի մէջ ծեծը ընդունված էր որպէս զլխաւոր պայման բանաւոր մարդուն կարգի և պատշաճի մէջ պահելու համար։ Եւ զարմանալին այն էր, որ ինքը ժողովուրդը այն աստիճան սովորած էր այդ դրութեանը, որ բոլորովին անբնական էր համարում, երբ չէին ծեծում։ Նա նմանում էր մի դրասոի, որ շատ կը զարմանար, եթէ իր տէրը չը մտրակէր։

Աղասին չէր հասկանում, թէ ինչ էր խօսվում իր շուրջը, որովհետև վրացերէն չը գիտէր։ Բայց ինչ որ տեսաւ, նրա վրա խիստ անախորժ տպաւորութիւն գործեց։ Այդ ինչ տեսակ անգգամ կնիկներ են, այդ ինչ տեսակ վայրենի մարդիկ են, մտածում էր նա.—բաւական չէ, որ կնիկները օտար մարդու հետ խօսում են, օտար մարդու մօտ երեսները բաց են անում, բայց այնքան անամօթ են, որ միմեանց ջարդում էլ են։ Նա մտաբերում էր սիւնեցի հայ կնոջ ամօթխածութիւնը, որը ոչ թէ օտարի, այլ իր տոհմակիցների հետ անգամ լրաւունք չունէր ոչ խօսելու, ոչ դէմքը ցոյց տալու։ Իսկ Աղասին այստեղ բոլորովին այլ տեսակ կեանք էր տեսնում և համարում էր այդ երկիրը կատարելապէս վայրենիների աշխարհ։

Բոլորովին անտեղի չէր պառաւ Քեթևանի նկատողութիւնը, Դաւիթ բէկը իսկապէս թոյլ էր իր անտեսութեան մէջ։ Ամենամեծ մարդիկն անգամ, որոնք պետութիւններ են կառավարում, որոնք աշխարհին օրէնքներ են տալիս, երբեմն իրանց տունը, իրանց ընտանիքը կառավարելու շնորք չունեն։ Դաւիթ բէկը, որպէս պատերազմական մարդ, ուշադրութիւն չէր դարձնում ընտանեկան մանր գործերի վրա։ Նա գոհ էր, եթէ իրան հանգիստ կը թողնէին աւելի խոշոր բաների վրա մտածելու համար։ Այդ պատճառով նրա բարի դէմքը, որ մի րոպէ առաջ փոքր ինչ խոժոռվեցաւ, կրկին իր սովորական պարզ արտայայտութիւնն ստացաւ, երբ աղմուկը ու խռովութիւնը դադարեց։

Թինան և Դարօն, երեխայի նման մոռանալով իրանց կերած ծեծը, մոռանալով միմեանց ծամերը քաշքշելը, այժմ հաչտ, ուրախ, ժպտելով ու ծիծաղելով, և միմեանց հետ քաղցրիկ խօսքեր խօսելով, փետրահան էին անում փասիանները։ Երևի, դրանց սրտերը ոխակալութեան ծանօթ չէին, երևի, դրանք չը գիտէին, թէ ինչ բան է վիրաւորանքը։

—Թինա, ցաւդ առնեմ, ասում էր Դարօն, յօնքերի շարժուածքով ցոյց տալով Աղասու վրա,—այդ մարդը որտեղից է եկել։—Մտիկ տուր, ինչ սիրուն բեխեր ունի։

—Աչքերը աւելի սիրուն են, հաղիւ լսելի ձայնով նկատում էր Թինան,—ով գիտէ, որքան շատ ճորտեր կունենայ դա։

—Դրա համար էլ մեր աղան այսպէս պատիւ է տալիս, իր մօտ է նստեցնում։ Երևում է, ազնուական մարդ է. մեր թաւադների մէջ այստեսակ տղամարդիկ շատ քիչ կան։ Տեսնում ես, ինչ լաւ հագնված է, ասաց Դարօն մի առանձին հոգեմայլութեամբ։

Թէև Աղասու հագուստը բաղկացած էր զադաքէ արխալուղից և Սիւնեաց երկրում գործված, հասարակ շալէ չուխայից, բայց այդ գրաւում էր երկու մանկահասակ կնիկների ուշադրութիւնը, որովհետև իրանց երկրում ճորտերի տէր թաւադներն անգամ այսպիսի հագուստ հագնում էին միայն հանդիսաւոր օրերում։

Նրանք մաքրեցին փասիանները փետուրներից, լուացին, իտակեցին, յետոյ պտուտակաւոր շամփուրների վրա խրելով, քարշ տուեցին կրակի վրա։ Շամփուրները կախված էին առաստաղից քարշ ընկած չղթայից, և պտտվելով կամաց—կամաց խորովում էին փասիանները։

Դարօի և Թինայի մի քանի րոպէ առաջ կատաղած սկեսուրը, Քեթևանը, այժմ բաւական բարի դէմք ընդունելով, զբաղված էր կերակուրների կաթսաներով, որոնք նոյնպէս քարշ էին ընկած առաստաղի չղթաներից խարոյկի վրա։ Կերակուրները կաթսաների մէջ մի առանձին մելամաղձական ձայնով բըսբըսկում էին, տարածելով իրանց շուրջը խիստ ախորժելի հոտ։ Մի քանի չափահաս աղջիկներ անդադար դուրս էին գալիս և ներս մտնում, կատարելով պառաւի պատուէրները։ Նրանք ճրագի փոխարէն բռնած ունէին իրանց ձեռքում խէժաւէտ եղևնի վառած տաշեղներ, որոնք լցրել էին տունը առնուշ խնկահոտութիւնով։ Դրանք Քեթևանի աղջիկներն էին, թուով երեք հոգի, որոնց երէցին կոչում էին Սօֆիո, միջնակին Փէփէլօ, իսկ կրտսերին Նինօ։ Այդ ուրախ, պարզամիտ արարածները, կոլոլված չթեղէն զերիանների մէջ, բոբիկ ոտներով վազվզում էին, թռչռում էին կրակի շուրջը, երբեմն այս բերելով, երբեմն այն տանելով, և իւրաքանչիւր սխալ գործելու միջոցին՝ պառաւ մօր զգուշացնող յիշոցները ա-

բոլոր հիւրերին մինչև գիշերը պահելով, արձակեն նրանց գիշերվայ ժամը 12-ին կամ 1-ին առանց լապտերների։ Թող փորձեն անցնել ստով անանցնելի ցեխով ծածկված փողոցների միջով։ Գուցէ ասում է նա, այդ սիբիրիզից յետոյ, կատարելապէս թաւալվելով ցեխերի մէջ մեր քաղաքային զեկավարները վերջապէս կը հասկանան թէ ինչ է նշանակում հարկերը պահանջել ժողովրդից, անդադար տուգանքներ նշանակել նրանց վրա եթէ փոքր ինչ ճիշտ չեն վճարում, բայց մի և նոյն ժամանակ ոչինչ չանել նոյն հարկատու ժողովրդի համար։

—

ԹԷԼԱՒԻՒ փետրվարի 6-ից մեզ գրում են որ եղանակը այդ քաղաքում այժմ գարնանային է։ Այս օրերս եկաւ թեթև ձիւն, բայց դարձեալ հալվել է։ Փողոցները ցեխով ծածկվեցան։ Քաղաքի վաճառականի վրա այուրի պուդը 2 ռուբլ գնից իջաւ 1 ռուբլ, բրինձը ծախվում է 3 ռ., գարին 70 կ., տաւարի, ոչխարի և խոզի միսը ֆունտը 15 կ.։ Ցանան մսի վրա նշանակված է 11 կոպէկ, բայց ով է ուշադրութիւն դարձնում տակսայի վրա։ Ցանկալի է իմանալ ոստիկանները ինչ գնով են առնում միսը։

—

ՋԱՔԱԹԱԼԻՒ մեզ գրում են. «Այստեղի Գատեխ, Բալախան և Ղուազչալ գիւղերի լեզգիների խմբի մի նոր աւանդութիւն է հնարել, որ նրա համար հարստանալու մի լաւ միջոց է դարձել։ Որպէս զի լեզգիների սերունդը բազմանայ, նա հրամայել է քանի մի տարի սրանից առաջ, որ ոչ մի լեզգի այրի կին իրաւունք չունի անպառակ մնալ, այլ պէտք է անպատճառ մարդու գնայ և ինքն ընտրի իր համար ամուսին, թէ կուզ մի մարդուն որ արդէն 10 կամ 20 ուրիշ կանայք ունի։ Մարդն էլ իրաւունք չունի հրաժարվել այս կամ այն այրի կնոջ իբ մօտ ընդունելու և նրան իր հարեմին աւելացնելու, իսկ եթէ համաձայվի հրաժարվել, թէկուզ պատճառ բերելով որ իր ֆիզիկական միջոցները չեն ներում մի աւելորդ կին պահելու, պէտք է իւրաքանչիւր չընդունված կնոջ համար 10 ռուբլ վճարէ իմամին։ Այդպիսով իմամը այժմ երկրի ամենահարուստ մարդ է դարձել։»

—

Լսում ենք որ անցեալ տարվայ վերջին ամիսներում Թիֆլիսի առաջնորդարանի մէջ հայոց հասարակութենից յօգուտ Թիւրքայ Հայաստանի սովեալների, հաւաքված 15,000 ռուբլ գումարը այս օրերս ուղարկվեցաւ Կ. Պոլիս պ. Յ. Զիթախեանի ձեռքով։

—

Հրատարակվեցաւ «Փորձ» հինգերորդ տարեշրջանի առաջին տետրակը, որ բովանդակում է իր մէջ հետեւեալ նիւթերը։ I. Հայը և Հայաստանը օտարների աչքում. հրապարակ. դասախօս. Աբգ. Յովհաննիսեանցի։ II. Ս. Էջմիածնի հայրապետական աթոռը և Ցաճկաստանի հայք։ III. Օրորոցի երգ, բանաստ. Գամառ Քաթիպա։ IV. Շահէն վէպ. Պ. Պռօչեանցի։ Հինգերորդ հնագիտական ժողովը Թիֆլիսում, Համբ։ VI. Կայրօլեան գերդաստան, Դանիէլ։ VII. Կոմս Լօրիս-Մէլիքովի տոհմաբանութիւն, Ա. Երիցեան։ VIII. Ազգ և Հայրենիք, Ա. Յ.։ IX Արշակ Տէր-Ղուկասով Ա. Յ.։ X. Իմ ձեռատետրս, Հասոնս։ XI. Ծաղկաքաղ։ XII. Հրաւէր Միացեալ Ընկերութեան։ XIII. Նուիրատուութիւններ ի նպաստ Ռուբինեան ուսումնարանի։ XIV. Յայտարարութիւններ։

—

«Փորձ» խմբագիր-հրատարակիչ Աբգար Յովհաննիսեան խնդրում է մեզ տպել հետեւեալ յայտարարութիւնը։ «Փորձի» տարեկան գինը 10 ռուբլ է։ Նոյնպէս կարելի է առանալ խմբագրատանից անցեալ չորս տարիների «Փորձի» տետրակները տարեկան 10 ռուբլիով։ Դիմել խմբագրութեանը կարելի է հետեւեալ հասցէով. Тифлисъ, Редакція Армянскаго журнала «Пордзъ»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹՈՄԱՍ ԿԱՐԼԷՅԼ

—

Լոնդոնի լրագիրները, յունվարի 6-ից հաղորդում են անգլիացի նշանաւոր պուբլիցիստ և պատմաբան Թոմաս Կարլէյլի մահուան մասին, որը վախճանվել է Լոնդոնում փետրվարի 5-ին։ Կարլէյլ ծնվեցաւ 1795 թ-ի դեկտեմբերին Դումֆրիսեան կոմսութեան փոքրիկ գիւղի մէջ, Էկլէֆշէմում։ Նրա ծնողները բաւական ուսեալ զիւղատնտեսներ էին և սկզբից նրան պատրաստում էին հոգևոր կոչման համար։ Կարլէյլ Էդինբուրգեան համալսարանում սովորում էր տատուածաբանութիւն, իրաւաբանութիւն և նոր լեզուներ, որոնց թվում և գերմաներէն լեզուն։ Կարլէյլ ծանր և լուռ բնաւորութիւն ունենալով, փախչում էր աղմուկից և հասարակութիւնից իր ցնորքներին բաւականութիւն տալու համար և ընկերների խաղերից և զուարճութիւններից զերադասում էր բանասաղծների ընթերցանութիւնը և միայնակ զբօսանքը լեռների մէջ։ Երկու տարի պարապելով մատեմատիկայի դասատուութեամբ Ֆայֆեան կոմսութեան մէկ կալջի մէջ, Կարլէյլ յայտնեց իր ծնողներին, որ հոգևորական կոչումն ընդունելու փոխանակ նա դիտաւորութիւն ունի գրականութեամբ պարապել։ Մօտ 1822 թ-ին Կարլէյլ պսակվեց և Դումֆրիսից 15 մղոն հեռաւորութիւն ունեցող մէկ փոքրիկ կալուածքում հաստատեց իր բնակութիւնը։ Իր այս առանձնացած կալուածքից անգլիացի պատմաբանը ուղարկեց իր առաջին յօդուածները Մօնտէսքիէյի, Նէլսօնի և երկու Փիտերի մասին Բրիստոլի Էնցիկլօպեդիայում տպվելու համար 1823 թ-ին։ Նա տպեց նոյնպէս գրականական մի քանի էսէներ „New Edinburgh Review“ ամսագրում։ Մի և նոյն տարում նա վերջացրեց Լէժանդրի երկրաչափութեան իր թարգմանութիւնը, որին կցեց նոյնպէս „ցարաբերութիւնների մասին տրակտատը։“ 1825 թ-ին Լարլէյլ Էդինբուրգում հրատարակեց „Վիլհելմ Մէյստերի“ թարգմանութիւնը, որով նա առիթ ունեցաւ գրագրութիւն սկսել Գէօթէի հետ „Գերմանիայի երկու հոգիներից մէկի հետ“. միւս հոգին, Կարլէյլի ասելով Շիլլէրն էր, որի կենսագրութեան հրատարակելով նա առանձնապէս պարծենում էր։ Վերոյիշեալ երկու գրուածքներից յետոյ նա հրատարակեց գերմանական վէպերի մէկ հաւաքածու („German Romances“ 1827, 4 vol.) քաղուած Գէօթէի, Տիկի, Բիլատերի, Ֆուկէի, Մուզէուսի, Հոֆմանի և ուրիշ մատենագիրների հեղինակութիւններից։ „Sartor resartus“-ի հրատարակութիւնը, որը սկսեց տպագրվել „Frazers Magazine“-ում դարձրեց նրա վրա բոլորի ուշադրութիւնը։ Կարլէյլ յառաջաբանում ասում է, որ այս գիրքը ինքը թարգմանել է գերմանական մէկ հին հեղինակութիւնից, որ հետեւեալ վերնագիրն էր կրում. „Շորը, նրա ծագումը և նրա մանկութիւնը, հեղինակութիւն դոկտոր Դիոգէն Տեյֆելսդրեկի“ և որ հրատարակված է մէկ անյայտ քաղաքում։ Այս գիրքը մէկ անխնայ կրիտիկ է անգլիական հասարակութեան դէմ։ Գիրքը մեծ յաջողութիւն ունեցաւ և նրա հեղինակին անուանեցին „Դարիս ցէնզօր“։ 1840 թ-ին հրատարակվեցաւ նրա նշանաւոր հեղինակութիւնը „Հերոսների մասին, հերոսների պաշտամունքի մասին և հերոսութեան մասին պատմութեան մէջ“ (On heros, hero-worship and the heroic in history), որի մէջ Կարլէյլ յայտնում է իր քաղաքական սիստեմը՝ միայն հերոսին է պատկանում հասարակութիւնները կառավարելու իրաւունքը և հասարակութիւնների պարտաւորութիւնն է ճանաչել այդ հրաշալի էակին և կոյր հնազանդվել նրան։ Կրոմվել և Նապոլէօն նկարագրված են որպէս հերոսութեան տիպեր։ Աւելորդ տեղ կը բռնէր յիշել նրա մեացած բազմաթիւ թէ նշանաւոր և թէ անշան գրուածքները, միայն պէտք է յիշել որ նա 1860 թ-ից մինչև 1864 թ-ը հրատարակեց „Պատմութիւն Ֆրիդրիխոս II պրուսացոց թագաւորի“, որի համար նա ստացաւ 1873 թ-ին պրուսացոց pour le Mérite պատուանշանը։ 1865 թ-ի նոյեմբերի 11-ին Կարլէյլ ահագին մեծամասնութեամբ ընտրվեցաւ Գլասգոյի տեղ, Էդինբուրգեան համալսարանի ռեկտոր։ Բրպէս անցնող հակառակորդ այս պատուաւոր պաշտօնը ստանալու համար ներկայացաւ տօրիների առաջնորդ Դիզրաէլին։ 1875 թ-ի դեկտեմբերին անգլիական ինտելիգենցիայի բոլոր երևելի ներկայացուցիչները ներկայացրին նրան մէկ մէդալ նրա ուսումնասիրոյ հասակից անցնելու համար։ Արևելեան պատերազմի ժամանակ 1877—1878 թ-երին Կարլէյլ շատ անգամ իր զօրեղ յօդուածներով յարձակվում էր անգլիացի ռուսասիրների վրա և պաշտպանում էր Բալկանեան թերակղզու հալածված ազգութիւններին։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է. պետական կայքերի մինիստրութիւնը, յայտնելով որ ժամանակ է Ռուսաստանի հարաւում սկսել խուզարկութիւններ հանքերի տեղերը գտնելու համար, խնդրում է դրամ որոշել հարկաւոր ծախսերը ծածկելու համար։

ԻՐԲԻԴ, 10 փետրվարի։ Մոսկվայի բօրսային մասնաժողովը, Մոսկվայի բօրսային ընկերութեան պատգամաւորների ժողովը, Պերմի, Յօբօլսկի և Իրբիդի քաղաքային հասարակութիւնները, նոյնպէս և Պերմի նահանգի զեմստվօի ժողովը վճռեցին միջնորդել կառավարութեան առաջ, որ երկաթուղու մի ճիւղ անցկացնվի Ցազիլից դէպի Սալինսկիէ գործարանները, Ալապաեվսկ, Իրբիտ և այլն։

ԼՕՆԴՕՆ, 10 փետրվարի։ Կ. Պօլսից փետրվարի 10-ից հեռագրում են. երէկ օտար պետութիւնների դեսպանները միահերպ բովանդակութեան, բայց առանձին առանձին գրութիւններ ներկայացրին Բ. Դրանը, որոնցով յայտնում են, թէ ստացել են Բ. Դրան շրջաբերականը փետրվարի 14-ից։ Ցոյս են յայտնում, որ Բ. Դուռը կը պահի իր խոստմունքը և Յունաստանի վրա չի յարձակվի, որ նա աւելի ընդարձակ զիջումներ կանի, քան թէ խոստացել է հոկտեմբերի շրջաբերականով։ Դեսպանները յայտնում են, որ նրանց հրամայված է մասնակցել բանակցութիւններին յունական խնդիրը լուծելու համար։ Բանակցութիւնների սկսելու մասին յայտնված է Յունաստանին և որոշ ասված է, որ Յունաստանը պատերազմական գործողութիւններ չը սկսի բանակցութիւնների ժամանակ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

մենեին չէին խանգարում նրանց ուրախութիւնը, որի պատճառը իրանք էլ չը գիտէին։

—Սօփիօ, հարցրեց երէց քրոջից միջնակ քոյրը՝ Փէփէլօն, նրան մի կողմ տանելով,—այդ մարդը միշտ պիտի մնայ մեր տանը։

—Չեմ իմանում, պատասխանեց սառնութեամբ Սօփիօն,—կարելի է մնայ, կարելի է գնայ։ Ով է իմանում։

—Ես կուզէի, որ նա միշտ մեր տանը մնար, ասաց Փէփէլօն ժպտելով.—դու չէիր ուզի։

—Հողեմ նրա գլուխը... ինչիս է պէտք... պատասխանեց Սօփիօն իր գեղեցիկ դէմքի վրա մի ծաղրական խոժոռ գործելով։

—Սիրուն տղամարդ է։

—Սիրուն տղամարդ է, քեզ համար պահէր, ասաց Սօփիօն, ձեռքի հինգ մատներով աննկատելի կերպով «մըճիկ հանելով» (*) դէպի Աղասու կողմը։

Մանկահասակ աղջիկներին յատուկ է իրանց առաջին սէրը արտայայտել արհամարհանքով։ Երբ գիւղացի հասարակ աղջկան մի սիրային խօսք ես ասում և նա պատասխանում է քեզ բարկութեամբ կամ ապտակով, կարող ես այնուհետև վստահ լինել, որ նա ընդունեց քո առաջարկութիւնը։ Այդ կէտից պէտք է բացատրել Սօփիօի արհամարհանքը դէպի Աղասին։ Սիւնեցի վայելչադէմ երիտասարդը արդէն իր վրա էր դարձրել աղջիկների և հարսների բարի ուշադրութիւնը, թէև նրանց ոչ մէկի հետ չէր խօսացել, թէև ինքը նրանց վրա ուշադրութիւն չէր դարձնում։

Փոքրիկ տնակի մէջ կեանքը հետզհետէ աւելի ուրախ, աւելի բաղդրեալ կերպարանք էր ստանում։ Պառաւ Քեթեանի որդիները, որոնք բէկի տանը ծառաների և սպասաւորների պաշտոն էին կատարում, աւարտելով իրանց գործը ախոռատանում կամ մարագում, այժմ եկել, ընտանեաբար շրջվել էին կրակի շուրջը։ Մէկը տաքանում էր և խորին հոգեմտայլութեամբ ականջ էր դնում կերակուրների եփ գալու ձայնին, միւսը խորովվող փասիանների հոտովն էր հրապուրվում, երրորդը իր պատառոտած արեխներն էր կարկատում, իսկ հինգերորդը մանր աւազով մաքրում էր մի ժանգոտած հրացան։ Նրանց մօտ թաւալվում էին մի խումբ կլոսամերկ երեխաներ, պառաւ Քեթեանի թոռնիկները, մէկը ծուլօրէն յօրանջում էր, միւսը նիրհում էր, իսկ մեացածները, որ աւելի արթուն էին, աչքները չռած, ապուշ ապուշ նայում էին կախոսների վրա։ Խարոյկի մեղմ բոցերը պլպլում էին, լուսաւորելով այդ ամբողջ նախնական կացութիւնը, որ իր պարզութեան մէջ կրում էր նահապետական կեանքի բոլոր վայելչութիւնները...

Բէկը լուռ մտախոհութեան մէջ թեք էր ընկած տախտի վրա. նա, կարծես, չէր նկատում, թէ ինչ է կատարվում իր շուրջը։ Թէքը նեցուկ տալով գլխին, նա ընկողմանած էր բարձի վրա և նրա միտքը սլացել էր հեռու, հեռու դէպի հայրենի աշխարհը։ Նա յիշում էր իր թշուառ մանկութիւնը, յիշում էր իր անբախտ, չքաւոր ծնողներին, յիշում էր այն բոլոր տանջանքը, այն բոլոր ցաւերի դառնութիւնը, որ մաշում էր նրանց։ Օտարութեան մէջ անցուցած տասն և հինգ տարին երևում էր նրան որպէս մի երազ, և քնից արթնացած մարդու նման, այժմ պատկերանում էր նրա մտքում միայն տխուր և վշտերով լի անցեալը, որ նա վարել էր հայրենական երկրում։ Նա կրկին վեր առաց եպիսկոպոսների, վարդապետների, մելիքների, տանուտէրների գրած հանրագիրը, սկսեց նորից կարդալ։

Աղասին լուռ նստած էր տախտից ցած, յատակի վրա։ Նրա ուշադրութիւնը այժմ գրաւել էին երկու հարսները, որոնք տաշտի մէջ սիմնդրի ալիւրից խմոր էին հունցում, այդ խմորից գնդակներ էին շինում, և խարոյկի շիկացած ածուխները բաց անելով, գնդակները թաղում էին տաք մոխրի մէջ, կրկին ծածկում էին ածուխներով։ Այնտեղ, մոխրի մէջ առանց այրվելու, եփվում էին գնդակները։ Դա այդ երկրի հայ թխելու ձևն էր, որ ոչ սակաւ զարմացնում էր Աղասուն, յիշեցնելով նրան իր հայրենիքի սպիտակ, թղթի պէս բարակ լաւաշները, որ պատրաստվում էին թոնրի մէջ։ Ի՞նչպէս ուտում են այս տեսակ հացը, մտածում էր Աղասին, այն ևս այսպիսի տան մէջ։ Նա այժմ սկսեց նայել սենեակի պատերի այն ճակատի վրա, որ պատած էր պարսկական գորգով, որ կողմումը դրված էր և բէկի տախտը։ Այստեղ տեսարանը բաւական գրաւիչ էր։ Պատի վրա կարգով քարշ էին ընկած զանազան տեսակ հին և նոր զէնքեր, զանազան տեսակ անօթներ։ Այնտեղ կարելի էր տեսնել երկաթէ մանր օղակներից հիւսված շապիկներ, որ զրահի տեղ էին գործածվում։ Այնտեղ կային պարսկական ճաշակով շինված, հնադարեան սաղավարտներ երկաթէ վակասներով։ Այնտեղ կային վահաններ, նիզակներ, տապարներ, որ կրում էին վաղեմի ժամանակների արհեստի կոչումը։ Դրանց թւում կարելի էր տեսնել և նոր ժամանակի զէնքերը. թրեր, ատրճանակներ, հրացաններ, լեզգու խէնջարներ, բոլորը բաւական գեղեցիկ և չքեղ կերպով պատրաստված։ Դրանց շարքում զետեղված էին՝ ահագին եղջիւրներից շինված և արծաթով պատած գինու գաւաթներ, զանազան տեսակ չիբուխներ, գունաւոր փայտից շինված գինու սրուակներ, որսորդական փողեր, մի խօսքով բոլորը, ինչ որ կայացնում էր տան տիրոջ գլխաւոր հարստութիւնը։

Սենեակի միւս պատերի վրա Աղասին տեսնում էր քարշ ընկած աւելի հասարակ առարկաներ, որպիսիներն էին՝ ձիու սանձեր, թամբերի պարագայք, մարդիկ կամ ձիաներ բռնելու առասանակներ (արկան), և դրանց թւում կարելի էր տեսնել՝ մինը միւսի հետ կապված, խեցեղէն փոքրիկ թմբուկներ, դարիաներ, որոնք մանկահասակ հարսների և աղջիկների երաժշտական սեպհականութիւնն էին։

Բէկը վերջացնելով հանրագրի կրկին ընթերցումը, դարձաւ դէպի Աղասին այդ հարցով.

—Դու այստեղ գալու ժամանակ Ֆաթալի խանը Ղափանումն էր, թէ մի ուրիշ տեղ։

—Խանը Ղափանում չէր, պատասխանեց Աղասին, սրտում ուրախանալով բէկի հետաքրքրութեան մասին,—ես գալու ժամանակ նա իր ցեղով անցել էր Արաքսը Ղարադաղի լեռների վրա ամառը անցկացնելու համար։

—Ի հարկէ, նա այնտեղ կը մնայ մինչև աշնան վերջը։

—Ի հարկէ, կը մնայ. խաշնարածները, մինչև ջուրը չը սառչի, չեն վերադառնում իրանց ամարանոցից։

Վերջին տեղեկութիւնները մի յուսադրական ուրախութիւն ազդեցին բէկի սրտին և նրա մի քանի բոպէ առաջ մռայլված դէմքը փոքր ինչ պայծառացաւ։ Նա այժմ գտանվում էր այն հոգեկան բերկրանքի մէջ, որպէս մի մարդ, որ տեսնում է իր առջև նպաստող հանգամանքներ, որոնք կարող էին հասցնել ցանկալի նպատակին։

Նրա մտածութիւնները ընդհատեց մի աղմուկ, որ լսելի եղաւ դրսից։

(Կը շարունակուի)

---

*) «Մըճիկ հանել» նշանակում է քօքօլայ անել։

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆՈՐ ՏՊԱՐԱՆ

### ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

### ԳԱՆՈՎՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ, տուն ԻՇԽ. ԲԷՀԲՈՒԹՈՎԻ

Այս օրերս բանալով ԹԻՖԼԻԶՈՒՄ լիակատար ՏՊԱՐԱՆ իւր ամէն պարագայութիւնքը, ընդունում եմ տալու ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ և ամէն տեսակ պատուէրներ. այն է՝ ԳՐՔԵՐ, ԼՐԱԳՐԵՐ, ԱՄՍԱԳՐԵՐ, ԲԼԱՆԿՆԵՐ, ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿՆԵՐ, ՀԱՇՈՒԻ ՏԵՏՐԱԿՆԵՐ, ՏՈՄԱԿՆԵՐ, ՁԱՅԻ ԵՒ ԾԽԱԽՈՏԻ ԵԱՌԼԻԿՆԵՐ (զանազան գոյների) և այլն:

Տպագրութեան մաքրութեանը և տպարանական կանոնների ճշտութեանը համար ԻԲՐԵԻ ՄԱՍՆԱԳԻՏ պատասխանատու եմ լինում միշտ: ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ կը կատարուին ԿԱՐՃ ՄԻՋՈՑՈՒՄ, ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ:

5—5 (2)

---

Հրատարակութիւն

### ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

### Զ. Գրիգորեանցի.

Դուրս եկան մամուլի տակից

1. Գրիգորեանց Զ.—Մարդակազմութեան տարրական դասեր 18 պատկերներով դպրոցների համար, աշխատ. Զ. Գրիգորեանց, գինն է . . . 50 կ.
2. Ղուկասեանց Հ.—Դասագիրք ընթերցանութեան, գինն կ. . . 40 կ.
3. Սիմէոնեանց Ն.—Աշխարհագրութեան ձեռնարկ Գ. Հ. գ. . . 60 կ.

Մամուլի տակ ընկան՝

1. Ծերենցի—„Թէոդորոս Ռշտունի“:
2. Գամառ-Գաթիբայի—Մանկական ոտանաւորներ և երգեր:

9—12

---

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պանտատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շոկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէյ ամէն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, սամոներներ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, զրիչներ ամէն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու գալերէում: 100—51

---

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ամբողջ Կովկասի մէջ գտնվում է միայն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ԱՐԾՐՈՒՆՈՒ գալերէյում: Վաճառումն ՊԱԼՏՕՆՆԵՐԻ, հագուստների, ԱՄԱՆՆԵՐԻ, մուրաբաների, ՄԱՀՈՒԴԻ, արիկօր, և այլն: 500,000 ԿՈՂՊԷՔՆԵՐ՝ ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ՝ ԳԸՐԻՉՆԵՐ 30% էժան քան թէյ ուրիշ տեղ:

7—10

---

# ՄԵՏԱԼԵՂԷՆ

### ԻՐԵՂԷՆՆԵՐԻ

### ՄԱԳԱԶԻՆԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Դիտաւորութիւն ունենալով վերջացնելու առևտուրս, կամենում եմ ՎԱՃԱՌԵԼ իմ ՄԵՏԱԼԵՂԷՆ ԻՐԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԸ, որը ես բացած ունեմ Թիֆլիսի մէջ սորանից 18 տարի առաջ. իրեղէնների պահեստի գնահատութիւնը, որը բաղկանում է Ֆրանսիայի, Անգլիայի և այլ երեղէններից, հասնում է 60-ից մինչ 70 հազար ռուբլի: Մագազինիս գնել ցանկացողներին խնդրում դիմել ուղղակի ինձ մօտ Թիֆլիսում Պուշկինսկայա № 13, (նախկին Երևանսկի պլոշչադ):

ԼԻԴՎԻԳ ՎԻԼԳԵԼՄՕՎԻՉ ՄԵԼՄԱՆ:

3—3 (2)

---

Մեծ քանակութեամբ ԹԷՅ առաջին տեսակի ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ 25% ԼԱՒ և ԷԺԱՆ է Մոսկվայի վաճառականների թէյից: Նոյն տեղը կան 50,000 ԿՈՂՊԷՔՆԵՐ և ՊԱԴՆՕՍՆԵՐ ուրիշ տեղերից 30% էժան: Ծախվում են ԶՄԵՌՆԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ, պալտօններ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳԻՆԻՆԵՐ և այլն: 10—10

---

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ ԼԻԻԴՕՎԻԿ ԻԵԳԵՐ ԷՐԵՆՖԵԼԴ-ԿԵՕԼՆԻ ՄԷՋ ՀՌԵՆՈՍ ԳԵՏԻ ՎՐԱ (ԳԵՐՄԱՆԻԱ): Առաջարկում է իր ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ Վ ԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՂԻՍՆԵՐ շինելու համար շոգիի և ձիու ոյժերի համար, նոյնպէս և ձեռքի շինութեան ԱՂԻՍՆԵՐ, ՊԼԻՏԱՆԵՐ, դրենաժի և ջրանցքի ԽՈՂՈՎԱԿՆԵՐ, կոուրի ԿՂՄԻՆՏՐՆԵՐ, ՖՐԱՆՍԻԱԿԱՆ կղմինտրներ և ուրիշ տեսակ առարկաներ շինելու համար: ԿԱԻ շաղախող և տափարակող ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՄԱՆՐԱՑՆՈՂ ջրաղացներ և մանաւանդ ՄՇՏԱՊԷՍ և միատեսակ ուժով գործող ՁԵՌՔԻ ՄԱՄՈՒԼ ԱՂԻՍԻ ՀԱՄԱՐ, որ աւելի օգուտներ է տալիս, քան թէ աղիս շինելու ճնացած բոլոր ձևերը և աւելի քիչ ծախս է պահանջում: Այդ պրեսների համար բաւական են երկու մարդիկ, որ պատրաստեն 4,000 գեղեցիկ աղիսներ, մանաւանդ նա յարմարվում է ՏՐՕՏՈՒԱՐՆԵՐԻ և անցքերի տափարակ ՔԱՐԵՐ, կրակին ընդդիմադրող, ԿՐԻ և ՑԵՄԵՆՏԻ և շլակի ԱՂԻՍՆԵՐ շինելու համար, նոյնպէս և պատրաստած, բայց օդի մէջ կատարելապէս չը ցամաքած աղիսները սեղմելու համար:



Նախագիծները ԶՐԻ են ուղարկվում:

LOUIS JÄGER, MASCHINEN-FABRIKANT IN EHRENFELD-KÖLN AM RHEIN (DEUTSCHLAND).

1—4 (13)

---

վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ.: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:

մի և նոյն տեղը ԹԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխաչափ գէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն:

22—100

---

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին ԿՕՆԳՕ-ԹԷՅ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի ԿԱՅՍԱՈՒ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ 2 ր. առանց թղթի: Անգլիական բէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ, ջնոսնի ԿՈՂՊԷՔՆԵՐԸ, տուրնօրի ԳՐԻՉՆԵՐԸ և էկստրակա կակաշոկոլադի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան: ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Պաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբող հաղուստ 15 ր., կոնֆէկտներ հապի դէմ 60 կ. ֆունտը:

21—100

---

ԿՈՆՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Գվորցովոյ փողոցում, վաճառվում են՝ ի միջի այլոց հետևեալ գրքերը:

1. Մօրիս Բլօկ: Փոքրիկ ձեռնարկ գործնական անտեսութեան. թարգ. Ս. Պալասանեան, տ. 1881 թ. գ. 50 կ. ձան. ծախ. 60 կ.
2. Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ պատմ. հայոց տ. 1881 թ. գ. 80 կ. ձան. ծախ. 1 ր.
3. Փալաքաշեան: Պատկերազարդ աշխարհագրութիւն: Ա. և երկ. տարիների համար կ. պ. 1881 թ. գ. 45 կ. ձան. ծախ. 55 կ.
4. Մալաթեան: Պատկերազարդ բնական պատմութիւն առ. և երկ. տար. համ. կ. պ. 1881 թ. գ. 45 կ. ձան. ծախ. 55 կ.
5. Մէկէօրա. Գիտական, աղգային և գրական ժողովածու: Ի 1881 թ. գ. 2 ր. 50 կ. ձան. ծախ. 3 ր.
6. Պօլ-Գը-Պօկ: Սին, խաղ, գինի: Վիպ. թարգ. Ա. Պարոնեանի կ. պ. 1881 թ. գ. 1 ր. 35 կ. ձան. ծախ. 1—50 կ.
7. Շեքսպիր՝ Ստէլլա: Վենետիկի մաւր: Ողբերգութիւն հինգ արարածուածով Շեքսպիրի կենսագրութեամբ. տ. 1880 թ. գ. 60 կ. ձան. ծախ. 70 կ.
8. Պարոնեան: Ազգային ջոջեր կ. պ. 1880 թ. գ. 3 ր. ձան. ծախ. 3 ր. 30 կ.
9. Փիլոնճեան: Ճաշակ հայ մատենագրութեան: Ծաղկաքաղ յաշխարհիկ լեզուէ հանդերձ գրական, պատմական, կենսագրական և այլ ծանօթութեամբք. կ. պ. 1879 թ. գ. 1 ր. 50 կ. ձան. ծախ. 1 ր. 75 կ.

Մամուլի տակից դուրս կը գայ և կը վաճառուի ամսոյս 15-ից նոյն գրավաճառանոցում Ս. Սանդինեանի. Հենչելի բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների համար:

Օտարաքաղաքացւոց պատուէրները կատարվումեն առանց յետաձգելու:

---

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաճեմատեցէք թէյի ֆունտը | | | 1 ր. | 5 կ. | Մոսկվայից բերվող թէյի հետ | | Ֆ. 1 ր. | 30 կ. |
| — | — | — | 1 ր. | 10 կ. | — | — | Ֆ. 1 ր. | 40 կ. |
| — | — | — | 1 ր. | 20 կ. | — | — | Ֆ. 1 ր. | 60 կ. |
| — | — | — | 1 ր. | 40 կ. | — | — | Ֆ. 1 ր. | 80 կ. |
| — | — | — | 1 ր. | 60 կ. | — | — | Ֆ. 2 ր. | — |
| — | — | — | 1 ր. | 80 կ. | — | — | Ֆ. 2 ր. | 50 կ. |
| Ամենալաւը | — | — | 2 ր. | — | — | — | Ֆ. 3 ր. | |

41—100

---

Մինչև այժմ չեղած ԷԿԱՆԶԻ ԻՒՂ, ՌԻԻՐԿ ՀՄԻԴՏԻ, որ կատարելագործված է բժիշկ ՄԱՎՐԻԿԻ ԴԷՅԶԻՑ: Առողջացնում է ամէն տեսակ ԽՈՒԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական չէ: ԵՐԵՔ ՌՈՒԲԼ բատանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՀԻՐ այդ իւղից, մանրամասն ԽՐԱՏՆԵՐՈՎ գործածութեան մասին: Այդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և Աղէքսանդր ՎԷՆՑԵԼԻՑ, Կազանսկայա փողոց № 3:

22—51

---

Ամենամ են ամէն տեսակ ՁՈՒԿԳՈՒՆԻ և ՊՂՆՑՔԻ կատարանքներ, գէրդեան եկեղեցու մօտ, ՄՐԻՎԱՆԻՒ տանը Կախէթու դիմերի մարանում:

19—25

---

**VICHY**

Складъ въ ПАРИЖѢ,
22, бульваръ Монтмартръ.

PASTILLES DIGESTIVES, приготовленныя въ Вичи изъ соли, добываемой изъ особенныхъ источниковъ, весьма пріятны на вкусъ и хорошо дѣйствуютъ противъ тошноты и труднаго пищеваренія.

SELS DE VICHY POUR BAINS. Одинъ свертокъ для ванны лицамъ, не могущимъ лечиться въ Вичи.

Во избѣжаніе поддѣлки, требовать на всѣхъ марку.

Компаніи.

Թիֆլիսում Յուրինովի մօտ:

---

**VICHY**

Управленіе:
PARIS, 22, boulevard Montmartre.

GRANDE-GRILLE. Отъ лимфатическаго расположенія, дурнаго пищеваренія, засоренія печени и селезёнки, завала, каменной болѣзни и проч.

HOPITAL. Отъ труднаго пищеваренія, тяжести желудка, потери аппетита, боли въ желудкѣ.

CELESTINS. Отъ боли въ поясницѣ, мочеваго пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

HAUTERIVE. Отъ боли въ поясницѣ, мочеваго пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

ТРЕБОВАТЬ названіе источника на коробкѣ.

Թիֆլիսում Յուրինովի մօտ

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Февраля 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.